

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ուրվագծային անդրադարձով ներկայացրել ենք Կիմ Աղաբեկյանի գրականագիտական դիմանկարը: Նա իր մենագրություններում ու հոդվածներում կարևորել է գեղարվեստական մտածողության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ներկայացրել է գրական նոր սերնդի ստեղծագործական նվաճումները, նշել է ձեռքբերումներն ու թերությունները, ընդգծել այն ընդհանուրը, որը բնորոշ է 1960-1980-ականների արձակին:

Բանալի բառեր` գրականագետ, մենագրություն, հոդված, գրող, արձակ, արժեք, ժողովածու:

Գրականագիտության զարգացման յուրաքանչյուր փուլ ի հայտ է բերում վառ անհատականություններ, ովքեր իրենց գիտական պրպտումներով ստեղծում են մնայուն ուսումնասիրություններ, ուղղորդում գեղարվեստական միտքը` ստեղծելով արժեքայնության չափանիշ:

Սյունյաց լեռնաշխարհի նշանավոր գիտնականներն էլ իրենց ավանդն են ներդրել հայ գրականության ու գրականագիտության զարգացման գործում, որոնց շարքում իր վաստակով առաձևանում է նաև Կիմ Աղաբեկյանը:

Մանկությունն անցել է հայրենի Գորիսի Հարժիս գյուղում: Այրել է գեղջուկ մանկան բուրբ հետաքրքրություններով: Իր անկեղծության, կարոտի, սիրո, ոգեշնչման չափանիշն իր ծննդավայրն է` Գորիսը, իր գյուղը, Որոտանը, սեգ սարերը, խորունկ ձորերը, գյուղի շիտակ ու պարզամիտ մարդիկ: «Տարիքիս հետ ավելի շատ եմ կարոտում մեր գյուղը, որ արքայականչի հետ արթնանում էր ու հեռվից մի մեծ մրջնանոցի էր նմանվում, որ գարնան սկզբին սկսում է շարժվել...երբ հիշում եմ մորս քնքուշ հայացքը, մեղմ ժպիտը, հորս դանդաղ քայլերը, հետաքրքիր գրույցները, խորունկ աչքերը, կարոտս ավելի է խորանում...»,-իր մանկության տարիներն այսպես է հիշում Կիմ Աղաբեկյանը մեր գրույցների ժամանակ:

Ապագա գրականագետը գյուղի դպրոցն ավարտելուց հետո մեկնում է բանակ` հայրենիքի հանդեպ պարտքը կատարելու: Չորացրվելուց հետո վերադառնում է գյուղ, բայց ուսման ծարավը հագեցնելու նպատակով թողնում է գյուղը:

1961-ին ընդունվել և 1966-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: 1968-ին աշխատանքի է ընդունվել համալսարանի հայ գրականության ամբիոնում` զուգահեռ սովորելով ասպիրանտուրայում: Նա ակտիվորեն մասնակցել է գրական կյանքին` հրապարակելով բազմաթիվ հոդվածներ` նվիրված գրականության խնդիրներին, գիտական նստաշրջաններում կարդացել բազմաթույթ զեկուցումներ, ապա ընթերցողների դատին հանձնել իր մենագրությունները և ժողովածուները: Նրա գիտական հետաքրքրությունների մեջ առանցքային տեղ ունեն Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Հրանտ Մաթևոսյանը, Ակսել Բակունցը և Հակոբ Օշականը:

1972թ.-ին հեղինակեց Գուրգեն Մահարու ստեղծագործության ուսումնասիրությանը նվիրված մենագրություն¹, որն էլ դարձավ գիտական թեզ, և նրան շնորհվեց բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մահարին այն եզակի հեղինակներից է, ում կյանքն ու գործը մշտապես մնալու են հայ գրաքննադատության հետաքրքրությունների ծիրում՝ իբրև իր ապրած ժամանակների բարձրարվեստ վկայագրություն: Մահարու մասին արդեն գրվել էին բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ, մենագրություն, որոնցում Մահարին գնահատվել էր իր ստեղծած հիմնական արժեքների շրջանակում: Կիմ Աղաբեկյանի ուսումնասիրությունը տարբերվում էր եղածից ինչպես ընդգրկման սահմաններով, այնպես էլ նրա ստեղծագործությունը գրական լայն համապատկերում դիտելու, վերլուծելու սկզբունքով: Աղաբեկյանը ներկայացրել է Մահարու անցած ստեղծագործական ուղին, գրական հասունացման ընթացքը, որոնումներն ու ձախողումները, տեղն ու դերը հասարակական կյանքում, գրական կապերի մեջ: Ինչպես Վազգեն Մնացականյանն է նշում. «Եթե Աղաբեկյանն իր գիրքը վերնագրեր «Անհանգիստ տաղանդ», սխալված չէր լինի, քանի որ եղիշե Զարենցի ժամանակաշրջանի ամենաանհանգիստ գրողը Մահարին է»²: Աղաբեկյանը ամենայն խորքայնությամբ անդրադարձել է Մահարու բոլոր ժողովածուներին:

Աղաբեկյանը նշում է, որ Մահարու ստեղծագործական վերելքի ուղին ավելի ակնառու է երևում բալլադներում՝ հաստատելով գաղափարական և ստեղծագործական հասունությունը: Քնարականի և պատմողականի համադրության մեջ Մահարու գրաշխարհում իշխողը քնարական տարրն է, որով էլ ընդգծվում է նրա ինքնատիպությունը: Նա Մահարուն իր ժամանակի տարեգիր է համարում՝ սեփական ասելիքով, գեղագիտությամբ, ընդգծված ինքնուրույնությամբ: Հեղինակը գրում է. «Զարենցի հոգատար վերաբերմունքի առկայությամբ Մահարին գտել էր սեփական երգի ակունքը՝ մնայուն երկեր ստեղծելու գաղտնիքը, որով և աչքի է ընկնում ինքնահաստատումի «Մրգահաս» (1932թ.) ժողովածուն»³: Ըստ գրականագետի՝ Մահարու բանաստեղծությունները բավականին ազդեցին այդ ժամանակաշրջանի պոեզիայի ընթացքի վրա, հատկապես օգտակար եղան Վահագն Դավթյանի, Սիլվա Կապուտիկյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Գևորգ Էմինի համար⁴: «Մրգահաս» ժողովածուն նորություն էր հայ քնարերգության պատմության մեջ: Բանաստեղծի ոճը հեռու է հռետորական չորությունից: Հուզական գունազեղությունն ու ուժը ոչ թե հաղորդվում են ձայնարկությունների միջոցով, այլ ճշգրտության աստիճանի օգտագործված և հարուստ ենթատեքստ ունեցող ինքնաբուխ էպիտետներով, որոնք իրենց հերթին հարստացնում են Մահարու արտահայտման բանաստեղծական միջոցները, նոր լույսով շառագունում բանաստեղծի ինքնատիպությունը»⁵, -նշում է Կիմ Աղաբեկյանը:

Աղաբեկյանն իրավացիորեն նկատում է, որ Մահարու պոեզիայի տաք շունչն ու ջերմացնող մթնոլորտը զգացվեց արձակ երկերի բազմաթիվ էջերում,

1 Կ. Աղաբեկյան, «Գուրգեն Մահարու ստեղծագործությունը», ատենախոսություն, Երևան, 1972:

2 Կ. Աղաբեկյան, Գուրգեն Մահարի, Ե., 2013, էջ 261:

3 Նույն տեղում, էջ 57:

4 Նույն տեղում, էջ 85:

5 Նույն տեղում, էջ 84:

որտեղ նա մնաց նույն քնարական հարուստ ներաշխարհն ունեցող բանաստեղծը¹: Վառ ապացույցը եղավ «Մանկություն և պատանեկություն» վեպը: «Նորա փոքրիկ հերոսները, այնուամենայնիվ, ինչպես կյանքում, արցունքի մշուշի միջից տեսնում են պայծառ երազներ և ժպտում...»², - գրում է Հ.Թամրազյանը: Աղաբեկյանն այն նորովի է ներկայացնում. «Մանկության հորիզոնում Մահարին տեսնում է հոշոտված հայրենի եզերքը, մշուշի միջից վերականգնվում են դառն ու լուսավոր հուշեր: Սակայն ընդհատված մանկության մասին պատմելիս հեղինակի լացն ու ծիծաղը միահյուսվում են իրար, և ծիծաղը հնչում է որպես կենսական նոր հողի վրա կանգնած, փրկված բեկորների կենդանության երգ, նրա անվերջ մեռնողի և անվերջ ծնվողի ոգու անմահության խորհրդանիշ»³: Աղաբեկյանը նշում է, թե որքան վարպետությամբ է անջատ հատվածների միջոցով Մահարին ներկայացնում մանուկ հոգու ներքին ապրումների և զգացմունքների ամբողջական պատմությունը: Այդ պատմությունը նկարագրում է ջինջ լեզվով, լուսավոր շեշտեր պարունակող թախիծով, անկեղծ ոգևորությամբ:

Էական է նկատել, որ Կիմ Աղաբեկյանը միշտ համակ ուշադրությամբ հետևել է, թե ովքեր են անդրադարձել Մահարուն: Եվ պատահական չէ, որ նա մեծ սիրով ու ոգևորությամբ է խոսում Սերգեյ Աղաջանյանի «Գուրգեն Մահարու արձակի պոետիկան» ուսումնասիրության մասին և շեշտում, որ իր համար հաճելի է ընթերցողին ներկայացնել ԵՊՀ-ի հրատարակչության կողմից 2011-ին հրատարակված վերոհիշյալ ուսումնասիրությունը, որն իր ամբողջության մեջ թարմ է ու նորովի: «Նոր գիրք Մահարու մասին» հոդվածում Աղաբեկյանը նկատում է. «...Սրանք գրաքննադատական որակներ են, որոնք կազմալուծում են գրականության արժևորման խորհրդային շրջանում ձևավորված կարծրատիպը, ըստ որի, անտեսվում կամ ետին պլան էր մղվում գրական երկի գեղարվեստականությունը և առաջ էր մղվում գաղափարական բովանդակությունը»⁴: Հենց այս առումով էլ նա Աղաջանյանի աշխատանքը սահմանազատում է գրողի մասին գրված նախորդ աշխատանքներից: Մահարիական տեքստը «ընթերցում է իբրև խոսքարվեստ, որին բնորոշ որակներն, իր իսկ խոսքով ասած, էական են գեղարվեստական ինքնատիպության ձևավորման համար»⁵:

Աղաբեկյանը Աղաջանյանի խոսքի կողքին դնում է նաև իր խոսքը. «Գրողը և ժամանակը, երգիծանքի տարատեսակները, թերասացությունները, ենթատեքստերը, պատումի ինքնատիպությունը, լեզվամտածողության բնորոշ առանձնահատկությունները, կերպարակերտման միջոցները, ենթագիտակցական իրողությունները և հատկապես գրողի Անհատականության, անփոփոխ վարքաբանության միով-բանիվ՝ պոետիկայի տարրերը՝ պայմանավորում են տարբեր և տարաբնույթ երկերը քննության ենթարկել միաժամանակյա տարածքում»⁶:

Հոդվածի վերջում կարդում ենք. «Մահարու անհատականության և գրա-

1 Նույն տեղում, էջ 90:

2 Սովետահայ գրականության պատմություն, Ե., հ. 1, էջ 256:

3 Նույն տեղում, էջ 115:

4 Աղաբեկյան Կ., Հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 233:

5 Աղաջանյան Ս., Գ. Մահարու արձակի պոետիկան, Ե., 2011, էջ 15:

6 Նույն տեղում, էջ 235:

կանության մեջ կա ներքին, ինքնաբավ, վիրավոր հոգին ամոքող մի մեղեդայ-
նություն, սիրո, կարոտի, ցավի ու անարդարության, որբության ու մենակու-
թյան մեջ տառապող մարդու նկատմամբ բարիության մի ինքնատիպ համան-
վագ... Մահարու գրականությունը կենսապատումի գրականություն է»¹:

Գրականագետ Աղաբեկյանը տարիներ շարունակ դասախոսել է Բեյրութի
Համազգայինի բարձրագույն ուսումնական հաստատությունում: Հիմնական
աշխատանքին զուգահեռ հանդես է եկել արտալսարանային դասախոսու-
թյուններով, տեղի մամուլում հրատարակել մի շարք հոդվածներ՝ «Կենդանի
շունչը», «Պօղոս Սևապեանին» և այլն: Այդ տարիների ուսումնասիրությու-
նների ուշագրավ արդյունքը «Հակոբ Օշական. ստեղծագործական աշխարհի
արահետներում» մենագրությունն է (2006թ.):

«Ազդակ»-ին տված հարցազրույցում Աղաբեկյանն այն միտքն է առաջ քա-
շում, թե ամբողջական հայ զգալու համար յուրաքանչյուր հայ մարդ սփյուռ-
քի որևէ օջախ պետք է այցելի: Խոստովանում է, որ տարիներ առաջ Բեյրութ
կատարած առաջին այցելության ժամանակ բախտ է ունեցել ծանոթանալու
սփյուռքահայ մեծագույն գրող, գրաքննադատ Հակոբ Օշականի ստեղծագոր-
ծություններին, որոնք ինքնաբավության մեծ զգացումներ են ներշնչել և մղել
Նրա մասին լայնակտավ ուսումնասիրություն գրել: «Դժվար է մտնել Օշակա-
նի ստեղծագործական աշխարհ և առավել դժվար է դուրս գալ այդ աշխար-
հից»², - գրում է հեղինակը: Աղաբեկյանի գնահատմամբ՝ Օշականը եռամեծար
հպարտություն է՝ գեղարվեստական խոսքի վարպետ, խոր ու ինքնատիպ
քննադատ, գրականության պատմաբան և մեծ ուսուցիչ: Գրականության մեջ
Նա չունի ուսուցիչ, Նրա ուսուցիչը իր ապրած կյանքն է, և իր հերոսները՝ այդ
կյանքի մարդիկ: Գրականագետը անդրադարձել է ոչ միայն Օշականի ստեղ-
ծագործությանը, այլև տվել է ժամանակի մտայնության պատկերը, որտեղ
կենդանացրել է մեծանուն գրողին և տեղափոխել մեր օրերը. «Օշականն ինձ
երևում է ծանրաքայլ, բայց և իմաստուն, ճշմարիտ, բայց և անչար, խստապա-
հանջ, բայց և գորովալից, ուրացողներից վիրավորված, բայց ոչ քինախնդիր,
սկզբունքային, բայց ոչ երբեք նեղմիտ, ստույգ անհատականություն, բայց ոչ
երբեք մաս, այլ՝ բոլոր պարագաներում ամբողջություն»³: Գրաքննադատ Ար-
մեն Ավանեսյանն այս մենագրության մասին գրում է. «Գոնե ինձ Օշականը եր-
ևում է Կիմ Աղաբեկյանը կողքին կանգնած»⁴:

Օշականի ստեղծագործությունը հայրենագիտություն է, մարդագիտու-
թյուն, ապրումների խոր ու գիտական պատմություն, անընդհատ խորացող
ինքնաճանաչումի չընդմիջվող ընթացք: Այս ամենը ավելի ակներև է Նրա պա-
տումներում, որոնք, հյուսելով ապրած կյանքի, կենսագրության, դեպքերի ու
իրողությունների մանրամասնություններից, աստիճանաբար ամբողջացվում
են՝ տեսանելի դարձնելով այն վիպական միջավայրը՝ իրադարձություններով,
ազգային և մարդկային, հասարակական ու անհատական հոգեկերտվածքնե-
րի Նուրբ ու խորունկ քննությամբ, ազգերի միջև ծավալվող հարաբերություն-
ներով, քաղաքակրթության առճակատումներով:

1 Նույն տեղում, էջ 238:

2 Աղաբեկյան Կ., Հակոբ Օշական, Ե., 2010, էջ 3:

3 Նույն տեղում, էջ 10:

4 Գրական թերթ, թիվ 36, 2007:

Հեղինակը փաստում է՝ Օշականը ստեղծագործական իր աշխարհով մոռացությունից փրկեց մի անզուգական բնօրրան՝ իր մարդկանցով, սովորույթ-յուններով ու բարքերով, վեհանիստ լեռներով ու կիրճերով, ծիթապտղի այգիներով, խոնարհ ու չարքաշ մշակներով, կտրիճ ասպատակներով ու մոլեգին սիրահարներով, հուսաբեկ առավոտներով, ծոյլ ու ալարկոտ մայրամուտներով: Նա իր պատումներում փոխում է գրական հերոսի ավանդական տիպը: Նրա հերոսը <<խաղաղ ու խելոք>> հայ գյուղացին չէ այլևս, այլ բարքերի բռնակալությունից ազատագրված մարդն է, որ գիտի սիրել, կռվել, ոճիր գործել և մեռնել:

Նկատի ունենալով, որ այսօր թուրք հասարակության մեջ ձևավորվում է իրենց պատմությունը վերացնելու գործընթացը, Աղաբեկյանն առաջարկում է Օշականի երկերը թարգմանել և հրատարակել թուրքերեն. դա պետք է արվի իբրև ազգային կարևորություն ունեցող պետական առաջադրանք: Նրա կարծիքով՝ Օշականի ստեղծագործություններից շատերը մեր հեռու և մոտ անցյալի, հարևանների հետ հարաբերվելու փոխհարաբերական խտացումն են:

1983թ.-ին Աղաբեկյանը հրատարակել է «Երեք դիմանկար» գիրքը, 1988թ.՝ «Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը», 1992-ին՝ «Արդի հայ արձակի զարգացման միտումները» (1960-80-ական թվականներ) մենագրությունները:

«Երեք դիմանկար» գիրքը նվիրված է Բաղիշ Հովսեփյանի, Մկրտիչ Սարգսյանի, Չորայր Խալափյանի երկերի քննությանը:

«Արդի հայ արձակի զարգացման միտումները» մենագրությունը դարձավ Աղաբեկյանի դոկտորական ատենախոսությունը (1994թ.), որում լուսաբանում է նշված ժամանակաշրջանի գեղարվեստական մտածողության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Գրականագետը ներկայացրել է գրական նոր սերնդի ստեղծագործական վաստակը, նշել նվաճումներն ու թերությունները, ընդգծել այն համընդհանուրը, որ հատուկ է նորագույն արձակին: «Ժամանակակից արձակի գլխավոր ուղղությունը, ինչպես նկատված է գրականագիտության մեջ, պատկանում է գրական այն սերնդին, որը բնորոշվում է Հ. Մաթևոսյանի, Վ. Պետրոսյանի, Պ. Չեյթունյանի, Հ. Մելքոնյանի... անուններով»¹, -գրում է Աղաբեկյանը:

Ս. Սարինյանը նշված մենագրության մասին գրում է. «Գրականագիտական արժեքավոր ուսումնասիրություն է և նրա նորույթը առավել ակնհայտ է գրականագիտության ու քննադատության ներկա ճգնաժամային վիճակի պարագայում»²:

Աղաբեկյանը դրսևորում էր բազմակողմանի գրականագիտական հետաքրքրություններ, անընդհատ զարգացնում գրաքննադատական իր մեթոդը: Ինչպես և պետք էր սպասել, նրա ուշադրությունը գրավեց հայ արձակի հսկան՝ Հրանտ Մաթևոսյանը: «**Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը**» մենագրությունը բովանդակում է գրողի ստեղծագործության գնահատման խորքային ելակետեր՝ ցույց տալով մաթևոսյանական արձակի գաղափարական հարստությունն ու գեղարվեստական ինքնատիպությունը: Ըստ Աղաբեկյանի՝ Մաթևոսյանը լրացնում է պատմության բացթողումները, գրում է այն, ինչ

¹ Աղաբեկյան Վ., Արդի հայ արձակի զարգացման միտումները, Ե., 2008, էջ 49:

² Սարինյան Ս., Գրքերի տեսություն, Ե., 1992, էջ 190:

ուրիշները չեն գրել ու այնպես չեն գրել, ասել է, թե բերում է մեր գոյաբանության ամբողջական պատկերը՝ շեշտը դնելով հետևանքը ընթացքով բացահայտելու փաստերի պատմահոգեբանական քննության վրա: Երբեմն ներքին մի տրամաբանությամբ իրար դեմ են կանգնում մտածողությամբ, աշխարհայացքով շփման ոչ մի եզրեր չունեցող գրողներ, որ թվում է, թե գրողական իրենց սրբազան պարտականությամբ ու կոչումով ինչ-ինչ հարազատություն պիտի ունենան: Երկարածիգ դարերի փորձի ու արդիական գոյակերպի ինքնատիպ սինթեզն ընդգծում է մաթևոսյանական աշխարհընկալման մի կարևոր հատկանիշը՝ ապրելը ոչ թե պարզն է, այլ պայքար ու նվաճում, դիմադրություն, ինքնահաստատում.« Գիտե՞ս ինչ, կյանք է՝ և մի՛ ակնկալիր անփոթորիկ ծով. և եթե խորտակվում ես՝ մեղքը քոն է և ոչ թե փոթորիկինը, քանի որ փոթորիկը ծովն է: Ու՞ր է խարիսխդ...»¹:

Գրականագետը փաստում է, որ Մաթևոսյանի ստեղծագործական աշխարհում ցեղասպանությունը շարունակվող ընթացք է՝ նույնքան դաժան ու անողորմ: Մեծ աղետը ոչ միայն մեր ժողովրդի հոգեբանության մեջ թանձրացած նստվածք է, այլև արյանը խառնված տառապանքի հեղուկ, որից պոկվելը, սահմանազատվելը անհնար է: Եվ քանի որ այդպես է. «տղան տնքաց ու լսեց իր տնքոցը: Եվ իր հոր տնքոցը: Եվ իր ցեղի տնքոցը»²: Գրողը ձգտում է պատճառաբանել ու բացատրել ցեղի տնքոցը՝ խոսքը պարուրելով դժվար կյանքի և հեռու հեռուներից եկող տառապանքի փայլով: Գրողի հոգեբանական տարաբնույթ դրսևորումները ոչ թե պատմության նկատմամբ ենթադրվելիք կամայական վերաբերմունքի արտահայտություններ են, այլ տառապանքի ու անարդարության մեջ պատեպատ խփվող, իսկապես, մեծ հարցադրումների անլուծելի հանգույցներում շաղված մարդու հոգու աղաղակ, որ հաճախ նրան մղում են հանդուգն պոռթկումների ու մշտական վեճերի:

Աղաբեկյանը նշում է, որ 1960-ականների համընդհանուր զարթոնքի մեջ գրականությունն էլ սկսում է մաքրվել կեղծ նոտաներից, վերականգնվում են եղծված, 30-ականներին վերջակետված գրական ավանդները, ճշտվում և թարմացվում են նյութին մոտենալու ելակետերն ու սկզբունքները: Բոլորովին պատահական չէ, որ Հ. Մաթևոսյանի որոշ ստեղծագործությունների մեջ եղեռն հիշեցնող պատկերներում միշտ էլ զգացվում է թուրքերի կողմից կատարված հանցագործության մեջ ռուսական դիվանագիտության, քաղաքական գործիչների հանցավոր թողտվության ներկայությունը: Ինչպես ցանկացած հայ գրող, այնպես էլ Մաթևոսյանը անկարող պիտի լիներ ցեղասպանության նյութի գեղարվեստական պատկերավորման մեջ «արվեստ խաղալ»: «Մաթևոսյանը հայտնաբերում է պատմության և ժողովրդի հոգեկան կերտվածքի կրկնություններ և մնայուն, անփոփոխ հատկանիշներ՝ խաղաղասեր, ստեղծող, համբերատար, խեղճ, հավիտենապես մաքառող, անդուլ կառուցող, որ կապում է կործանված կամուրջները և չի նկատում, որ ետևից գալիս են նույն կործանողները»³, - նշում է գրականագետը:

Աղաբեկյանի գիտական և ընթերցողական հետաքրքրությունների կենտ-

1 Աղաբեկյան Կ., Հայոց առեղծվածի խնդիրները Մաթևոսյանի երկերում, Նոր-Դար 1, Ե., 2006, էջ 64:

2 Նույն տեղում, էջ 60:

3 Նույն տեղում, էջ 65:

րոնում էր նաև արդի գրական ընթացքը: Նույն պատասխանատվությամբ էր նա գրում թե՛ հայ գրականության դասականների և թե՛ այսօրվա հեղինակների մասին (Էդիկ Խաչիկյան, Վարդան Գրիգորյան և ուրիշներ):

Գրականագետն իր «Մեծ աշխարհի նախաշեմին» հոդվածում անդրադարձել է Էդիկ Խաչիկյանի «Ապրելու սահմանից անդին» վերնագիրը կրող ակնարկապատմվածքների ժողովածուին, որտեղ հեղինակը ընթերցողին ստիպում է՝ նորովի անցնել իր իսկ հիշողությունների, ծանր ու դժնի տառապանքների միջով, զգալ ցավն ու կսկիծը այսօրվա գետնաքարշ կյանքի: Գրողի աշխարհը տակավին փոքր է իր տարածքով, ընդգրկած կյուրծով, ծավալվող իրադարձություններով, բայց այն առկա է, ինքնուրույն, ինքնատիպ թե՛ բովանդակությամբ և թե՛ գեղարվեստական դրսևորման կերպերով: Իհարկե, սա մեր ընթացիկ արձակում արդեն իսկ նվաճում է:

Գրականագետ Կիմ Աղաբեկյանը, ուսումնասիրելով Վարդան Գրիգորյանի վեպերը, որոնք ուղղված են քրիստոնեական վարդապետության հայկակա-նության խնդիրներին, համակարծիք լինելով, ընդունելով գրողի արտահայտած մտքերը, բացելով վեպերում առկա դժվարընկալելի գաղափարների փակագծերը, ընթերցող-անհատին ներկայացնում ու հաղորդակից է դարձնում իր իսկ խոսքին. «Քրիստոնեական վարդապետությունը մարդուն կանգնեցնում է կարելիությանը հասնելու անհանգրվան ճանապարհի վրա: Այդպիսին էր կյանքը երեկ, այդպիսին է կյանքն այսօր: Հավատը ոչ միայն ինքնագոհողության, այլ նաև ինքնահաստատումի ճանապարհ է: Ոչ թե ազգը պիտի ծառայի հավատին, այլ հավատը ազգին: Սա է ճշմարիտ քրիստոնեությունը»¹: Վարդան Գրիգորյան գրողը չի երկնչում դժվարություններից: Նա անընդհատ առաջադրում է նոր խնդիրներ, բացահայտում ու պատճառաբանում հակադիր դիրքերում կանգնած կերպարների մտքերի խմորումներն ու գործողությունների ընթացքը: Քայլ առ քայլ գրողը բացում է հերոսների ներաշխարհը. պատճառաբանում ներհոգեկան բախումներն ու նրանց գործունեության բարդ ու հակասական ընթացքը: Պատմական դեմքերի ու նրանց գործունեության նորովի, թարմ ու ինքնատիպ մեկնությունները համահունչ են այսօրվա հետ և խիստ արդիական: Ինչպես «Դար կորստյան»-ը, այնպես էլ «Մանյա Այրք» վեպերը միշտ էլ մնալու են արդիական, քանի որ գրողը խոսում է համամարդկային արժեքների մասին, դրանք դիտարկում անհատի և հասարակության միջև ծավալվող հարաբերությունների տեսանկյունից և այդ ամենը իմաստավորում ազգային կյանքի անխառն բովանդակությամբ:

Աղաբեկյանի գրականագիտական ժառանգության մեջ մի առանձին շերտ են կազմում հայրենի եզերքի գրողներին՝ Ակսել Բակունցին, Սերո Խանգադյանին և այլոց նվիրված հոդվածները («Մեծ բարեկամության լուսեղեն հետագիծը», «Կյորեսը և կյորեսեցիները կամ շարունակվում է Շենի հին կռիվը», «Մտորումներ Ակսել Բակունցի «Կարմրաքար» վեպի շուրջ» և այլն):

Գիտնական-գրականագետը արգասառատ գործունեությունը զուգակցել է գիտամանկավարժական աշխատանքի հետ: Տարիներ շարունակ հայ գրականություն է դասավանդել, մի շարք հատուկ դասընթացներ վարել և այսօր էլ դասավանդում է Երևանի պետական համալսարանում, Գորիսի պետական համալսարանում: Նա մեծ սիրով ու ոգևորությամբ է իր խոր ու բազմակողմա-

¹ Աղաբեկյան Կ., Հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ :

Նի գիտելիքները հաղորդում երիտասարդ սերնդին: Նրա համար գրականությունը ոչ միայն գիտական հետազոտության առարկա է, այլև կեցության ձև: Իր լայնահուն ու գիտականությամբ համեմված աշխարհայացքով ուսանողների բազմաթիվ սերունդների մեջ սեր ու նվիրում է պատվաստել հայրենի երկրի նկատմամբ, հոգևոր արժեքների նկատմամբ, դաստիարակել նրանց՝ որպես իսկական ու ճշմարիտ հայրենասերների: Այսօր հանրապետության հարյուրավոր բանասերներ նրա սաներն են եղել, նրա գիտական ղեկավարությամբ շատերն են պաշտպանել թեկնածուական ատենախոսություններ:

Գնահատելով նրա վաստակը՝ հայրենի եզերքը նրան շնորհեց «Ակսել Բակունց» հուշամեդալ: Երկարամյա գիտական, ստեղծագործական որոնումներով լեցուն գործունեության, անմնացորդ նվիրումի համար արժանացել է նաև ՀՀ «Մովսես Խորենացու» մեդալի, ԵՊՀ «Ոսկե մեդալի», ՀՀ գրողների միության՝ «Գրական վաստակի համար» մեդալի:

СУСАННА ГРИГОРЯН - ЛИТЕРАТУРНО-НАУЧНОЕ НАСЛЕДИЕ К. АГАБЕКЯНА

- В статье кратко рассмотрено литературно-научное наследие Кима Агабекяна. Он в своих монографиях и статьях осветил перемены происшедшие в художественном мышлении. Представил творческие достижения нового поколения литературоведов, отметил достижения и недостатки, выделил то общее, что присуще новейшей прозе.

Ключевые слова: литературовед, монография, статья, писатель, проза, сборник.

SUSANNA GRIGORYAN - KIM AGHABEKYANS LITERARY HERITAGE

- The article touches upon the literary heritage of K. Aghabekyan. In his monographs he has covered the changes occurred in artistic thinking. He has also presented the creative gains of the new literary generation marked their achievements and flows emphasized the general traits, characteristic of the modern prose.

Key words: literary, monography, article, writer, prose, collected.